# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ 15.03.2019Թ. ԹԻՎ 5/13-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ՀԱՆՁՆՄԱՆ ԿԱՐԳԻ ՀԱՎԵԼՎԱԾԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՏԱԿԱՐԳ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ՀԱՆՁՆՄԱՆ ԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրչյանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի և Նելլի Հարությունյանի,

հաշվի առնելով ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 15.03.2019թ. թիվ 5/13-Լ որոշմամբ հաստատված Որակավորման քննության ընդունման և հանձնման կարգի հավելվածը հանդիսացող «Արտակարգ դեպքերում որակավորման քննության ընդունման և հանձնման կարգ»-ում **(այսուհետ՝ Կարգ)** փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի 2-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 13-րդ հոդվածի 9-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետի, 33-րդ հոդվածի 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի, ինչպես նաև Պալատի կանոնադրության 16.5 կետի 34-րդ ենթակետի և 18.6 կետի պահանջներով,

***Ո Ր Ո Շ Ե Ց՝***

1. Կարգի 9-րդ կետը *«Որակավորման քննությանը»* բառերից առաջ լրացնել ***«Հեռավար կարգով»*** բառերը:

2. Կարգի 10-րդ կետը *«միջոցների օգտագործմամբ»* բառերից հետո լրացնել ***«, բացառությամբ սույն կարգում նշված դեպքի»*** արտահայտությամբ:

3. Կարգի «III.» գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ. ***«III. Հեռավար կարգով որակավորման քննության գործընթացը»***:

**08 մայիսի 2020թ.**
**թիվ 10/5-Լ**

4. Կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ III[1] գլխով.

***«III[1] Հեռավար կարգով որակավորման քննությունը հանձնելու հնարավորություն չունեցող անձանց որակավորման քննության կազմակերպումը***

***21[1] Հեռավար կարգով որակավորման քննությունը հանձնելու հնարավորություն չունեցող և սույն կարգի 7-րդ կետում նշված ձևաթղթի դիմումում համապատասխան նշում կատարած հավակնորդների որակավորման քննությունը կարող է կազմակերպվել Փաստաբանների պալատի (Փաստաբանական դպրոցի) վարչական շենքում՝ ապահովելով հետևյալ պայմանները՝***

1) ***մեկ լսարանում միաժամանակ քննություն հանձնող հավակնորդների քանակ չի կարող գերազանցել 9 անձը.***
2) ***քննություն հանձնող հավակնորդների միջև հեռավորությունը պետք է կազմի առնվազն 1,5 մետր.***
3) ***քննություն հանձնող հավակնորդները պետք է շենքում և քննության ամբողջ ընթացքում կրեն դիմակներ և ձեռնոցներ:***

***21[2] Սույն կարգի 21[1] կետով սահմանված դեպքում որակավորման քննությանը մասնակցող հավակնորդը պետք է ներկայանա անհատական ծանուցման մեջ նշված օրը և ժամին՝ անձը հաստատող փաստաթղթով: Որակավորման քննությունից ուշացած կամ առանց անձը հաստատող փաստաթղթի ներկայացած հավակնորդին չի թույլատրվելու մասնակցել որակավորման քննությանը:***

***21[3] Հավակնորդներն իրենց աշխատասեղաններն ընտրում են վիճակահանության միջոցով:***

***21[4] Թեստային առաջադրանքը հավակնորդը լրացնում է համակարգչով, որից հետո այն տպում է մեկ օրինակ, տպագրված առաջադրանքի վրա գրում է իր անունը, ազգանունը, ստորագրում է այն և հանձնում հանձնաժողովի անդամին:***

***21[5] Հավակնորդին չի թույլատրվում որևէ պատրվակով լքել որակավորման քննության սենյակը, իսկ քննական սենյակն ինքնակամ լքած հավակնորդը համարվում է որակավորման քննությունը չհանձնած:***

***21[6] Քննությունը սկսված համարվելու պահից 30 րոպեի ընթացքում հավակնորդները էլեկտրոնային եղանակով կատարում են իրենց նշումները և տպում առաջադրանքը: Եթե հավակնորդը քննությունը սկսված համարվելուց 30 րոպե հետո առաջադրանքը չի հանձնում Հանձնաժողովի անդամին, ապա տվյալ հավակնորդը համարվում է որակավորման քննությունը չհանձնած:***

***21[7] Քննության ամբողջ ընթացքը և համակարգիչների էկրանները կարող են տեսաձայնագրվել:***

***21[8] Սույն կարգի մյուս գլուխների պահանջները տարածվում են նաև սույն գլխով սահմանված կարգով քննություն հանձնող հավակնորդների նկատմամբ:»:***

5. Կարգի 39-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ երրորդ նախադասությամբ. ***«Ընդհանուր կարգը կիրառվում է նաև՝ 1) սույն կարգի III[1] գլխի պահանջների համաձայն որակավորման քննություն հանձնող հավակնորդների նկատմամբ՝ Ընդհանուր կարգի 66-րդ, 67-րդ, 68-րդ, 69-րդ,***

***70-րդ, 71-րդ և 72-րդ կետերի մասով, ինչպես նաև 2) դիտորդներ ներգրավելու հարցերով՝ Ընդհանուր կարգի դիտորդներին (դիտորդական կազմակերպություններին) վերաբերող կանոնների մասով:»:***

6. Կարգի 55-րդ կետում *«դեպքի»* բառը փոխարինել ***«դեպքերի»*** բառով:

7. Հանձնարարել Պալատի խորհրդի քարտուղարին սույն որոշումը հրապարակել Պալատի կայքում:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Արա Զոհրաբյան

**08 մայիսի 2020թ.**
**թիվ 10/5-Լ**
**ք. Երևան**